«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

14 Ապրիլի 2021, N 9 - 3

«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետը, առաջնորդվելով գիտական գործունեության միջազգայնացման առաջնահերթություններով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդեսը հրատարակել տարեկան 6 անգամյա պարբերականությամբ, որից 2-ը անգլերենով՝ «Messenger International ASUE» անվանմամբ:

2. Գիտության գծով պրոռեկտոր Թ.Մ.Մկրտչյանին՝ ապահովել գիտական հանդեսի նոր համարների հրատարակման և առաքման (տարածման) հետ կապված անհրաժեշտ գործողությունների իրավական հիմքերը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել գիտության գծով պրոռեկտոր Թ.Մ.Մկրտչյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2021 թ. ապրիլի 14

Երևան